

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Սորափրութիւն հովհասեան Գաւառաց՝ :

ՏՓԽԻՍ է մայրաքաղաք Սրաց՝ աշուանի առ հնուքն և ՚ի նորումն , և զարդիս աթոռ փոխարքայի կայսերութեան Ռուսաց , վասն որոյ և լրագիրն Վովկաս՝ մանրամասնաբար խօսի զնմանէ , տես անդ՝ :

Վախէթ է նահանգ Սրաց ՚ի հարաւ կուսէ մեծի լերինն Վովկասու , կամ լաւ ևս ասել՝ առ ստորտով նորին . ՚ի հնումն էր սա առանձինն թագաւորութիւն , ազատ ՚ի թագաւորութեանց Վարժայ և Իմէրէթի . և արքայանիստ քաղաք սորա էր Վրեմ՝ ըստ զանազան հին պատմագրաց , որպէս և յաւուրս Շահաբասայ առաջնոյ արքայի Պարսից դէռ ևս կանգուն կայր թագաւորութիւնն , և թագաւորն յերեսաց նորա ընդ Սովարսաբայ թագաւորին Տփլեսաց փախեալ յաշխարհն Իմէրէթի : Ի հնումն անթիւ յաճախութիւն էր եկեղեցեաց ՚ի քաղաքիս , բայց ապահիմն ՚ի վեր կործանեցան յաւազակաց Վեկաց (Էպիտ) , և արդ քաղաքն համբռն դադար բնակութեան աւազակացն այնոցիկ է : Վահանգն Վախէթի բաժանի յերիս գաւառս , ՚ի Թելլաւ կամ ՚ի Վախէթ , ՚ի ներքին և ՚ի վերին Վիսեղս , և քաղաք երկուց Վիսեղաց՝ Սղնախ , զորոց առանձինն կայ մեզ խօսել ՚ի ստորև :

(Դ) Երկրին Վախէթի է ըստ ամենայնի քաղցր և ախորժական և բարեյարմար , և ջուրք նորա բարեհամբունի զմեծ գետն Մազան՝ որ սկրսեալ ՚ի լերանց Վովկասու և ընթացեալ ընդ բովանդակ երկարութիւն դաշտին՝ խառնի ընդ Լօր գետ՝ որ բլխի ՚ի Վոմբոռ լերանց , և ընդ նմա միացեալ խառնին ՚ի Վուր գետ մերձ ՚ի Սամուխ դաշտ :

1 Տես երես 56 :

2 Խօսեցեալ է և մեր քաղաքէս յորագրիս , 1849 , երես 91 :

Նրկիրն է բերրի և այգաւէտ , վասն որոյ և յամենայն տեղիս անուանի է զինին Վախէթի : Ընակիչք երկրիս յաղթանդամք են և հսկայաձէք և զեղեցկադիտակք : Որպէս վերագոյն յաղագո այլոց նահանգաց կանխեցաք ասել , ըզնոյն և յաղագս բնակչաց Վախէթի ասել արժան է , զի են ընդ ծառայութեամբ տէրութեանն , և կամ ստրուկք իշխանացն Սրաց :

Վրեմ է հին մայրաքաղաք Սրաց և արքայանիստ տէրութեանն Վախէթի , ընդ ստորտով մեծի Վովկասու , ՚ի վերայ հարթաժաւալ տեղւոջ . յարեմտեան կողմանէ սորա անցանէ վրտակ մի Մազան գետոյ . աւերեալ է քաղաքս ՚ի ժամանակաց անտի արքային Շահաբասայ առաջնոյ , և աւազակք Վեկաց իբրև ՚ի կաղազս թագուցեալք , պատեհի մնան աւարհարութեան . յեկեղեցեաց դէռ ևս բազումք կան կանգուն , և բազումք խոնարհեալք :

Թելլաւ քաղաք առաջին առ ստորտով Յիւ (Կոր) կոչեցեալ լերին ՚ի բարեյարմար տեղւոջ յայսկոյս Մազանայ յանդիման Վրեմայ . օդ և ջուր սորա քաղցր և գովելի . ՚ի նախնումն բերդաքաղաք էր , և երբեմն արքայանիստ Սրաց : Տունք հայոց հասանեն մինչև 9600 , ունին զերկու եկեղեցիս յանուն սրբոյն Վեորգայ : Թաղք հայոց երկու , մի՛ բնիկ Թելլաւեցոց , իսկ միւսն՝ գաղթականաց ՚ի զանազան տեղեաց հայոց՝ անուանեալք Չուկչալավանցիք (Կին պարիսպ) . հին բերդն բազում ուրեք քակտեալ և աւերեալ և ամենեին անպիտան է . իսկ նորն որ ՚ի Սրաց ժամանակէ անտի մնացեալ՝ դէռ ևս կանգուն կայ , և յերիս մասունս բաժանի , և ՚ի միում մասին բանտարանն է արքունի . իսկ երկուքն՝ այնպէս ամայի , և երևելի շինութիւնք նորա մասամբ իւրք խաթարեալք և աւերեալք : Տունք Սրաց հասանեն 9300 , ունին զ2 եկեղեցիս և զմի հոգևոր դպրոց : Մտ չիք ինչ արժանի յիշատակութեան , բաց յարքունի ուսումնարանէն՝ որ գեղեցիկ ձևով յերիս կարգս բաժանի . մի՛ վասն վերա-

տեսչի ուսումնարանին, երկրորդն վասն
հասարակ վարժապետաց, երրորդն վասն
աշակերտաց՝ որք յերիս դասս որոշեալ
են : Ի մերայնոց կիսով չափ գիտեն ըզ
լեզու հայոց, այլ հասարակեալ լեզու
նոցա է լեզու Արաց :

Առիսպիր է գիւղ յարևմուտս կոյս
Թեւրաւայ, հեռի ՚ի նմանէ Եօթն մղո
նաւ . տունք հայոց են 100 Թուով, իսկ
Արաց առաւելուն . եկեղեցի հայոց
փայտակերտ է և անշուք . չիք որ աստ
՚ի մերայնոց որ զլեզու հայոց գիտիցէ,
այլ զԱրացն առնուն ՚ի կիր :

Վիստաւուր՝ է գիւղ Արաց հեռի ՚ի
Թեւրաւայ քսան և հինգ մղոնաւ, տունք
հայոց 30 . աստ ևս չիք որ գիտակ լե
զուիս հայոց . եկեղեցի հայոց հասա
րակ, Ժողովուրդն ամենեքին ստրուկք
իշխանացն Արաց : ()դ գեղջս չէ գո
վելի :

Ատան է գիւղ Արաց առ ստորո
տով լերին Աովկասու, յայնկոյս Մլա
զանայ՝ մերձ լեռնականացն Աւսուրայ,
Թիուլի և Փշաւի . տունք հայոց 27,
եկեղեցին փայտեայ և անշուք . չգիտեն
մերայինք զլեզու հայոց . տունք Արաց
բազումք . առ հասարակ ստրուկք են իշ
խանաց Արաց :

Յայսմ գեղջէ ելանեն ճանապար
հորդք առ լեռնականս և առ այնոսիկ
որք դեռ ևս կան ՚ի կռապաշտութեան,
և ոմանք պատուեն զգլուխ զենեալ այ
ծու, մանաւանդ Թէ պաշտօն տանին
այնմ, և ՚ի հանդիսի աւուրս իւրեանց
զոհեալ զայծ մի՝ ուտեն զմիսն և ըմ
պեն գինի, և զգլուխ այծուն հանեալ
՚ի ցից բարձր՝ սկսանին երգել Վայ Վայ
լայ . և յորժամ զվասն էրն այնորիկ հար
ցանիցէ որ, ասեն ծերունիք նոցա և
օրինացն վարդապետք, Թէ Մտուած
վասն մեր յղեաց յերկնից զգիրս՝ և ե
կեր զայն այծն, և զօրութիւն գրոյն
բնաւորեալ է ՚ի գլուխ այծուն, վասն
որոյ պատուեմք զայն : Շոիք են նորա
յոյժ յոյժ, տեարք բազում անդէից և
հօտից, Թէպէտ առ ահի տէրութեանն
չկարեն համարձակ առնել զայս ծէս՝
ըստ որում ՚ի տէրութենէն ունին զբա

րողիչ քահանայս մեծ ոռձկօք . սիրողք
են յոյժ քահանայից՝ ոչ ինչ խտիր դնե
լով ՚ի նոսա յաղագս ազգին կամ կրօ
նիցն, և ՚ի տեսանելն բանան զգլուխս և
Արաց բարբառով զօրհնութիւն հայ
ցեն . և որ զարմանալին է՝ ՚ի յիշատակ
ննջեցելոց մեծ ծախս առնեն, մինչև
զտասն կամ զքսան կով և եզինս զենուլ
և առնել զպատարագիս . բայց խղճալի
քահանայն Արաց զատ ՚ի մատուցանե
լոյն զպատարագն յայսպիսի դէպս չզօրէ
ինչ, ըստ որում որպէս մի ՚ի հասարակ
մարդոցն ստեալ լուրեայն հայի ՚ի նոսա .
յայնժամ յառնէ մին ՚ի Ժողովրդակա
նաց անտի՝ զորքահանայ անուանեն ծի
սի իւրեանց, այր ծերունի և դիւաբախ,
և առնու նա զմեծ կահոյր մի լի գինեաւ
՚ի ձեռս իւր և յառնէ յոտին, սկսանի
զպէսպէս անուանս սրբոց կամ նախա
հարց իւրեանց յիշել, կամ յոր բլուրս,
յոր ձորս խաչ կամ գերեզման կամ
նշան ինչ կարէ մտածել, կարգայ զնո
սա յանուանէ տեղեացն, զի օգնեցեն
ննջեցելոյն, և փոքր ինչ ՚ի գինւոյն հե
ղեալ յերկիր՝ ապա ըմպէ զամենայնն .
և ՚ի վերայ այսր ամենայնի՝ դաշամք
յուխտ մտանեն ընդ հարազատ քահա
նային Արաց, զի ՚ի մատուցանելն զպա
տարագ՝ զհոգի ննջեցելոյն յարքայու
թիւն մուծցէ, վասն յումպէտս չանցա
նելոյ ծախուցն . և Թէ համարձակեացի
քահանայն ասել Թէ իւրաքանչիւր որ
ըստ գործոց իւրոց և արդեանցն երա
նութեան ժամանէ կամ զատապարտի,
անդէն վաղվաղակի ՚ի քթթեալ ական
մահու սպանանեն զնա : Ի մտանելն
նոցա ՚ի տուն Մտուածոյ կենդանոյ՝ Ե
թէ քահանայն կամ սարկաւագն բուր
վառաւ շուրջ եկեցէ ըստ սովորութեն,
իսկոյն ՚ի միջաց իւրեանց հանեն զժրի
պամորչն՝ և առեալ ՚ի բուրվառէն զհոլը
դնեն ՚ի ծխպամորչն և քարչեն յեկե
ղեցւոջ ՚ի ժամերգութեանն . բազում
անգամ, որպէս և ես ՚ի բազմայ լուեալ
և տեղեկացեալ եմ ՚ի ծխական քա
հանայից Արաց, ՚ի մատուցանելն ըզ
պատարագ՝ գան ոմանք զինաւորեալ
զինու պատերազմողաց՝ հրացան ՚ի ձե

ուին , և ելեալ 'ի բեմն առ ժամարարն և ստիպեն փութով տալ ինքեանց զհաղորդութիւն , զի 'ի ճանապարհ կամ 'ի գողութիւն երթան . և ահա անդ է վտանգն տարակուսելի : Արօնասէրք են ամենայն լեռնայինք և մեծաւ եռանդեամբ համբուրեն զխաչ , զաւետարան և զմասունս սրբոց և զպատկերս , բայց աւելորդապաշտք են յոյժ յոյժ . 'ի մէջ ամենեցուն զխաչն և զանուն սրբոյն Պէտրոզայ յարգեն մեծապէս , մինչ զի կանայք նոցա՝ ոմանք զքսան , ոմանք և զերեսուն աւելի կամ պակաս նշանս իաչի կարեն 'ի վերայ հանդերձից իւրեանց՝ 'ի զանազան կոտորոց 'ի պէտպէս զունոց :

Ի լերինսն յայնստիկ գտանի տուն մի կամ տոհմ յանուն Մըշակունի՝ կուպաշտ , բայց ճիսացեալք են յոյժ մեծութեամբ , և են արք ականաւորք : Պատմեն ականատեօք՝ թէ Մըշակունի անուանեալքն են արք հսկայաձեւք և հայասէրք , և թէ ասեն զինքեանս սերեալս 'ի Հայոց , ունելով 'ի դասուկերտի իւրեանց զաշտարակ մի լի հնութեամբ ազգիս՝ զոր օրինակ զգիրս , զգանազան զէնս , զգրամս , և այլն . և եթէ այսօրիկ ճշմարտօք իցեն՝ ինձ այսպէս թուի՝ թէ 'ի վերոյիւ աշխարհի մերոյ յաւուրս թագաւորութեանն Մըշակայ որդւոյ Տիրանայ Մըշակունւոյ՝ մինչ Մըշակ արքայն մեր յուսացեալ 'ի Սիրս դեգերէր անդ՝ 'ի սերնդոց նորա մնացեալ իցեն , և ապա յանցանել ժամանակաց դարձեալ իցեն 'ի կուպաշտութիւն . բայց այս ևս ստոյգ է , զի անուն տոհմին յայտնի է ամենեցուն Մըշակունի անուամբ մինչև Ռուլ , Խլեսուր և այլ մերձակայ լեռնականաց՝ ճանաչել զնոսս տոհմ մեծ , և առ հասարակ Մըշակունի անուամբ՝ զտուն նոցա իմանան . և այն տեղիք չեն ընդ իշխանութեամբ Ռուսաց , այլ իւրաքանչիւր ազգ տանուաէրական իշխանութեամբ կառավարին :

Սանիէօր է գիւղ ինչ հեռի 'ի Թեւրաւայ հինգ ժամու՝ յայնկոյս Մըշական գետոյն առ ստորոտով Արվկասու . տունք

Հայոց են 32 , ունին զմի եկեղեցի , և տունք Սրաց բազումք . երկիւղալի է ճանապարհ սորա յաւազակաց Սեկաց :

Շաքրիան է գիւղ հեռի 'ի Թեւրաւայ եօթն ժամու՝ յայնկոյս Մըշական գետոյն , առ ստորոտով մեծի լերինն . տունք Հայոց 16 :

Շիլդայ է գիւղ Սրաց հեռի 'ի Թեւրաւայ՝ ութ ժամու՝ յայնկոյս Մըշականայ գետոյն , առ ստորոտով յիշեալ մեծի լերինն , և գրեթէ դրակից մերձաւոր Սեկաց . վասն որոյ որպէս Սիրք գիտեն զլեզու Սեկաց՝ նմանապէս և Սեկք գիտեն զլեզու Սրաց . երբեմն Սեկք 'ի Շիլդայ և երբեմն Սրացիք 'ի Սեկկիս անպատակեն՝ անպակաս յամենայն ժամանակս :

Տուրիսցիխէ՝ գիւղ Սրաց խառն ընդ Հայոց՝ տունք Հայոց 25 , յայնկոյս Մըշականայ . օդ տեղւոյն ջերմ է յամառան , և ջուրն չէ յարմար , և ունին զմի փայտեայ եկեղեցի :

Առ ճատան է գիւղ Սրաց յայնկոյս Մըշականայ առ ստորոտով Արվկասու , հեռի 'ի Թեւրաւայ միով աւուրք . տունք Հայոց տասն , իսկ Սրացն բազումք յոյժ . երկիւղալի է այս գիւղ՝ ըստ որում Սեկկիք յամենայն աւուրս անպակաս երթեկեն , և որպէս զմերձաւոր ծանօթս ճանաչեն զբնակսն , մինչև յականէ յանուանէ թուել և զկանայս . ուստի և 'ի գեղջս գտանին բազում աշտարակաձե բրգունք վասն երկիւղի , մինչ զի յամենայն գիշերի կազմ և պատրաստ կան ամենայն արք և կանայք զէն 'ի ձեռին , զի և կանայք չեն պակաս աւուրութեամբ քան զարս , որպէս և ինձ 'ի միում նուագի պատահեցաւ՝ գալ յայցելութիւն յայս գիւղ մերազգի ժողովրդոց՝ հանդերձ քանի մի քահանայիւք , և 'ի ձեռն բազում պահապանաց և զգուշաւորութեան անցուցանել զմի գիշեր :

Խալմիան է գիւղ Սրաց հեռի 'ի Թեւրաւայ միով աւուրք յայնկոյս Մըշականայ՝ առ ստորոտով յիշեալ լերին . սա ևս ըստ այլոց գիւղօրէից երկիւղալի է յոյժ , և տունք Հայոց սակաւք են 'ի նմա :

Պ ուարելէ աւան կամ քաղաքագիւղ յայնկոյս Ալազան գետոյն՝ առ ստորոտով մեծի լեռինն . ջրաշատ տեղի բայց և երկիւղաշատ . իւրաքանչիւր տուն գրեթէ առանձինն ամրոց իմն է , ուստի յամենայն գիշերի չպակասին արհաւիրք և աղաղակք . տունք Հայոց 35 , իսկ Ս րաց մինչև 9700 . Հայք վաճառականք են և այգետեարք , ուստի և ճոխք . գտանին երկու հին բերդք , ունին զմի նոր եկեղեցի աղիւսակերտ . յարևմտեան կողմանէ աւանին առ ձորովն՝ որ հանէ դէպ 'ի լեառն՝ է բնակութիւնն արքունական զօրաց՝ որ պահպանեն զսահմանագլուխս և զանցս ճանապարհաց :

Երկնանդալ՝ գիւղ ինչ յարևելս կոյս առ հիւսիսիւ , փոքր ինչ հեռի 'ի Թեւրաւայ . տունք Հայոց 12 , արք հողագործք և գոռհիւք :

Կօնդու է գիւղ ինչ յարևելս Թեւրաւայ՝ ոչ յոյժ հեռի 'ի նմանէ . տունք Հայոց սակաւք են յոյժ , արք բիրտք և հողագործք :

Ուրիթութեան՝ գիւղ Ս րաց 'ի վերայ լայնածաւալ գետնոյ , հեռի 'ի Թեւրաւայ քսան և հինգ մղոնաւ դէպ յարևելս նորա . տունք Հայոց մինչև 65 , արք հողագործք և ստրուկք . ունին զմի փայտեայ անշուք եկեղեցի յանուն սըրբոյն Սարգսի :

ՃԱՆՕԹՈՒԹԻՒՆԻՔ . 1 . Ի բաց թողան քանի մի մանր գիւղորայք , որոց բնակիչք ընդ յեղեալ գիւղս՝ հովուին 'ի ծխական քահանայից նոցա , մանաւանդ առ սակաւութեանն չունին զառանձին եկեղեցի :

2 . Առ հասարակ ամենայն վերոյիշեալ գիւղորայք են այգաւէտ , և բնակիչքն ստրուկք հողագործք և այգեպանք :

3 . Գիւղորայք յայնկոյս Ալազանայ՝ անուանի են պողաւէտութեամբն . նա մանաւանդ մշակութիւն շերամոյ յոյժ գերազանց՝ քան զմիւս գիւղորայս յայնկոյս Ալազանայ :

4 . Ըստ իմ կարծեաց և ուղիղ մտկաբերութեան , առիթ բնակութեան յայնկոյս Ալազանայ ոչ այլ ինչ է՝ յայնպիսի երկիւղալի տեղիս , եթէ ոչ ամենայնիւ արգաւանդ պողաբերութիւն սեղւոյն :

5 . Ի մերոյնոյ յայտմ գաւառի՝ յոյժ պակաս են հայախօսք , բայց փոքր ինչ աւելի քան զբնակիչս Քարթլայ և Իմերէթի :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Զ .

Ինքն-նական Բերքեր՝ .

ՍՆՔ բաց 'ի նիւթական բերքերէն , նաև մտաւոր կամ աննիւթ բաներու ալ սլիտոյք ունինք . և աս բաները , որ քաղաքական տնտեսութեան մէջ անքն-նական Բերքեր կը կոչուին , նիւթական բերքերուն պէս աժէք ունին : — Իր ժիշկ մը կաթուածէ զարնուած մարդէն շուտ մը արիւն հանելով՝ զմարդը կը խալըսէ մահուանէ , ուստի իրեն ծառայութեան վարձքն ալ կ'առնէ . որ է ըսել օգտակարութեան աժէքը . բայց աս օգտակարութիւնը՝ որ կաթուածեալին անցաւ , բնաւ նիւթական բանի մը վրայ կեցած չէ . ինչպէս է զգեստի մը վրայ , ուտելիքի մը վրայ կեցած օգտակարութիւնը : Թատրոնի մը մէջ նուագարանները կը զարնեն , դերասանները կը խաղան ուրիշ զուարճութիւն պատճառելու համար . բայց ով որ կ'ուզէ հաղորդ ըլլալ նոյն ուրախութեան՝ պէտք է որ անոր համեմատ վարձք մը տայ , այսինքն զուարճութիւնը գնէ . ասով յայտնի է թէ նոյն զուարճութիւնը օգտակարութիւն մը ունի , բայց անանկ օգտակարութիւն մը որ և ոչ մէկ վայրկեան մը նիւթական բանի մը վրայ կը կենայ , հասարակ օգուտը ցուցնելու մէկ դիէն լըմըն . նալը մէկ կ'ըլլայ : Թե որ մէկուն երգելը ես լսած չըլլամ , կրնամ համառած ըլլալ անոր երգելէն . նիւթական բանի մը վրայ կեցած չէ որ նայիմ ու համը առնեմ . ուստի թէ որ ուզենամ ես ալ համառնել , պէտք է որ նոյն ան , նիւթական բերքը նորէն հաստուի , պէտք է որ երգիչը նորէն սկսի իր երգը :

1 Գլ . Produits immatériels.